ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆԻ

2016թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ գալիք Ամանորի ու Սուրբ Ծննդյան հրաշափառ տոների կապակցությամբ: Մաղթում եմ քաջառողջություն, երազանքների իրականացում և խաղաղություն Ձեր ընտանիքներում և մեր պետության սահմաններին: Թող գալիք տարին լինի բարի և ուժ ու կորով պարգևի մեզ բոլորիս, որպեսզի համատեղելով մեր ջանքերը և անշեղ մնալով մեր բռնած ուղուց, առավել ակտիվ ու միասնաբար լծվենք պետականության կայացման կարևոր գործին:

Եվ թո՛ղ Աստված օրհնի Հայաստանի Հանրապետությունը:

Հավատարիմ մնալով ձևավորված ավանդույթին՝ 2012 թ.-ից սկսած յուրաքանչյուր տարի ամփոփելով իմ պատգամավորական գործունեության արդյունքները, Ձեզ եմ ներկայացնում իմ կողմից 2016 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների համառոտ նկարագիրը: Ինչպես նախկինում, այնպես էլ այս տարի, մշտական կապ պահպանելով թիվ 30 ընտրատարածքի բնակիչների հետ, շարունակել եմ ընդունելությունների կազմակերպումը Վանաձոր քաղաքում մշտական հիմունքներով գործող իմ պատգամավորական գրասենյակում, ինչպես նաև ստացել բազմաթիվ գրավոր դիմումներ և առաջարկություններ: Այս տարվա ընթացքում ևս հետևողականորեն բարձրացրել եմ Ձեզնից ստացված հարցերն ու առաջարկությունները ՀՀ պետական կառավարման մարմինների առջև ինչպես ԱԺ ամբիոնից, այնպես էլ օգտագործելով տարբեր քաղաքական հարթակներ: Իրականացրել եմ բազմաթիվ հանդիպումներ թիվ 30 ընտրատարածքի համայնքներում նպատակ ունենալով մշտապես անձամբ իրազեկվել տարածքում առկա խնդիրներին և հնարավորինս աջակցել յուրաքանչյուր անձի՝ իմ լիազորությունների շրջանակներում: Հարկ է նկատել, որ իմ պատգամավորական գործունեությունը բնավ չի սահմանափակվել թիվ 30 ընտրատարածքի խնդիրներով. ակտիվորեն մասնակցել եմ համապետական բոլոր խնդիրների քննարկմանն ու դրանց լուծման ուղղությամբ ՀՀ ԱԺ-ում իրականացվող աշխատանքներին:

Ստորև, ըստ ոլորտների, ներկայացված են իմ գործունեության որոշ արդյունքներ: Նշված հիմնախնդիրները բարձրացվել են ինչպես առանձին պատգամավորական հարցումների, գրությունների, այնպես էլ հայտարարությունների, ելույթների ու հարցերի միջոցով՝ Կառավարության հետ հարցուպատասխանի կամ առանձին նախագծերի ներկայացման ու քննարկման ժամանակ.

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

- Երևան քաղաքի տրանսպորտային ցանցի բեռնաթափման համար 113 մլն դոլար վարկ վերցնելու հարցի քննարկմանը հարցերով և ելույթով դեմ եմ արտահայտվել ծրագրին և առաջարկել վերջապես սկսել ներդրումներ կատարել նաև Հանրապետության մարզերում, որպեսզի մարդիկ նորմալ ապրելու հնարավորություն չունենալու պատճառով ստիպված չլինեն տեղափոխվել մայրաքաղաք և ըստ այդմ մայրաքաղաքի տրանսպորտային ցանցը բեռնաթափելու կամ նման բնույթի այլ խնդիրներ առաջանան: Դեմ եմ արտահայտվել նաև այդ վարկը ոչ թե Երևանի համայնքային, այլ ՀՀ պետական բյուջեից մարելուն: Միաժամանակ խոսել եմ վարկերով պետական պարտքի անհամաչափ բարձրացման ու դրա մարումը հասարակ քաղաքացիների ուսերին դնելու անընդունելիության մասին: *Վարկային նախագծին դեմ եմ քվեարկել:*
- Ելույթով և գրավոր կարգով դիմել եմ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ)՝ հարց բարձրացնելով էլ. էներգայի գիշերային հաշվիչների աշխատանքը նախատեսվածից ուշ սկսելու մասին: Դիմումում պահանջել եմ հաշվիչների ժամերի ճշտությունը ստուգել ոչ թե տարին, այլ ամիսն առնվազն 1 անգամ, ինչպես նաև ՀԷՑ-ի կողմից վերահաշվարկի իրականացում և քաղաքացիների կողմից ավել վճարած գումարների փոխհատուցման տրամադրում:
- Լարսի անցակետի փակման հետ կապված՝ ավիաընկերությունների կողմից ավիատոմսերի գների պայմանավորված եռակի թանկացման կապակցությամբ դիմել եմ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողով՝ գները կարգավորելու և չարաշահումներ թույլ տվող անձանց պատժելու առաջարկությամբ:
- ՀԾԿՀ ծրագրի (զեկույցի) քննարկման ժամանակ ելույթ եմ ունել հանրային ծառայությունների, հատկապես՝ էլ. էներգիայի, ինչպես նաև գազի մատակարարման ու գազասպասարկման ցածր որակի և բարձր գների մասին:
- Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի տարեկան ծրագրի քննարկման ժամանակ բարձրացրել եմ արհեստական մենաշնորհների հարցը շաքարավազի, բանանի, դեղերի և այլ ոլորտներում, որոնք այդ ապրանքների արհեստականորեն բարձր գներ սահմանողներն են:
- Վանաձորում աշխատող տաքսի ծառայության անհատ վարորդների դիմումով՝ դիմել եմ քաղաքապետարան՝ նրանցից տարեկան 15.000 ՀՀ դրամի չափով հավելյալ գումար գանձելու վերաբերյալ որոշումը չեղարկելու պահանջով, սակայն քաղաքապետը հրաժարվել է ուժը կորցրած ճանաչել նշված որոշումը:
- Պարտադիր կուտակային կենսաթոշակների վերաբերյալ օրենսդրությունը վերանայելիս կրկին անգամ հանդես եմ եկել ելույթով՝ բարձրացնելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են գումարների վերադարձման երաշխիքների բացակայությունը, անարդյունավետ կառավարումը, խտրականության և առհասարակ քաղաքացիների դրամական միջոցներն առանց նրանց համաձայնության կենսաթոշակային ֆոնդերին փոխանցելու խնդիրները:
- Դեղերի մասին նոր օրենքի ըն-

դունման քննարկմանը ելույթ եմ ունեցել՝ բարձրաձայնելով Հանրապետությունում դեղերի գների չափազանց բարձր լինելու հանգամանքի մասին՝ հատկապես համեմատելով դրանք Վրաստանում առկա գների հետ: Իմ կողմից շեշտադրվել է այն հանգամանքը, որ այդքան բարձր գների հետ մեկտեղ դեղամիջոցների որակը հեռու է բարձր լինելուց, դեղատնային շուկան մոնոպոլիզացված է և որ բազմաթիվ դեպքերում Վրաստանում դեղի մանրածախ գինն ավելի էժան է, քան Հայաստանում նույն դեղի մեծածախ գինը, ինչի հետևանքով մարդիկ ստիպված մեկնում են Վրաստան՝ նույն դեղն ավելի էժան ու որակով գնելու նպատակով:

- Ինչպես և նախորդ տարիներին, այս տարի ևս բոլոր հնարավոր առիթներն օգտագործել եմ խորհրդային տարիներին ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու գործընթացի անօրինականությունը վերհանելու համար՝ ելույթներ ունենալով ինչպես խորհրդարանում, այնպես էլ յուրաքանչյուր առանձին գործով դիմումները վերահասցեագրելով կառավարություն:
- Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2016թ. հունվարի 26-ին Երևանում և հունվարի 29-ին Լյուքսեմբուրգում ստորագրված «Հայաստանի Մ6 միջպետական ճանապարհի ֆինանսական պայմանագիրը վավերացնելու մասին» հարցն ԱԺ-ում քննարկելիս առաջարկել եմ ճանապարհաշինությանը ներգրավել այն համայնքների բնակիչներին, որտեղ տարվում են աշխատանքները, օրինակ՝ Դեբետի, Աքորու, Շամուտի, Լորուտի, Աթանի, Դսեղի, Ալավերդիու բնակիչներին:
- Երկու կառավարություններին էլ առաջարկել եմ ստեղծել տվյալների միասնական շտեմարան՝ ավտոմեքենաների մաքսազերծման գները թափանցիկ և կանխատեսելի դարձնելու և ըստ այդմ կոռուպցիոն գործոններից խուսափելու համար:
- Նոր հարկային օրենսգրքի նախագիծը խորհրդարանում քննարկելիս հանդես եմ եկել հարկերի բարձրացման դեմ ելույթով, այնուհետև գրավոր առաջարկությունների փաթեթ ներկայացրել նույն խնդրի վերաբերյալ:
- Նոր կառավարության ծրագրի քննարկմանը ելույթ եմ ունեցել խորհրդարանում՝ կրկին անգամ բարձրացնելով լուծման կարոտ բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ մայրաքաղաքի համեմատ մարզերի թերֆինանսավորման և թերզարգացման, առանց դատարանի որոշման քաղաքացիների ձեռքից իրենց միջոցները խլելու, քաղաքական համակարգի բևեռացվածության, գազային համակարգի անարդյունավետ կառավարման և բարձր գնի, գազասպասարկման դիմաց անիմաստ վճարումների և այլ խնդիրները:
- «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի նախագծի քննարկման ժամանակ թե՛ պաշտպանության հանձնաժողովի նիստում, թե՛ ԱԺ լիագումար նիստի ժամանակ դեմ եմ արտահայտվել ժողովրդից 1.000 դրամների հավաքագրման մեխանիզմի ներդրմանը, այլ դրա փոխարեն մատնանշել եմ մի քանի այլ աղբյուրներ, որոնցից գոյացած միջոցների գանձումն ավելի արդարացի և եկամտաբեր է: Մասնավորապես՝
  - Դիլիջանում ՊԵԿ-ի կողմից հիմնադրված ուսումնական կենտրոնի վաճառքից կամ վարձակալությունից ստացված միջոցների փոխանցում հատուկ հիմնադրամին
  - Ճանապարհային երթևեկության և կարմիր գծանշումների խախտման հետևանքով նշանակված տուգանքների ամբողջական փոխանցում հատուկ հիմնադրամին
  - Ոստիկանության և առհասարակ կառավարության ու դրան առընթեր կառույցների կրճատումից գոյացած միջոցների փոխանցում հատուկ հիմնադրամին

Իմ կողմից նաև առաջարկվել է օրենքին հետադարձ ուժ տալ մինչև 1994 թվականը, ինչպես նաև շահառուների թվում ընդգրկել նաև այն զինծառայողներին, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել խաղաղ պայմաններում՝ այլ անձի կողմից կատարված հանցագործության հետևանքով:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏ

- Վանաձորի Ազատամարտիկների պուրակի սկզբնամասում ապօրինի հատման ենթարկված 5 արծաթափայլ եղևնիների հարցով դիմել եմ գլխավոր դատախազություն՝ համայնքի գույքին վնաս հասցնելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու համար, սակայն հաղորդումն ընթացք չի ստացել, քանի որ դատախազությունը գտել է, որ այդ արարքում հանցակազմ չկա:
- ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան ընտրելիս առաջարկել և պաշտպանել եմ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի թեկնածությունը, սակայն պաշտպան է նշանակվել մեծամասնության կողմից առաջարկված թեկնածուն:
- Բարձրացրել եմ Վարդգես Գասպարիի ապօրինի կալանավորման հարցը: Այնուհետև ելույթ ունեցել, ինչպես նաև գրավոր փաստաթղթով դիմել վերաքննիչ դատարան՝ ի պաշտպանություն Գասպարիի իրավունքների: Հասարակական ճնշման ներքո ապօրինի որոշումը վերացվել է, Գասպարին ազատ է արձակվել:
- Ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը նամակով դիմել է ԵԱՀԿ նախագահ Ֆրանկ Վալտեր-Շտայնմայերին, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ ԻլկաԿաներվային, ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիին, ԱՄՆ կոնգրեսին և սենատին, Եվրամիության նախագահ Դոնալդ Տուսկին և Եվրամիության հանձնաժողովի նախագահ Ժան Կլոդին, Եվրոպական խորհրդարանի նախագահ Մարտին Շուլցին և Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդին՝ պահանջելով սանկցիաներ կիրառել Ադրբեջանի ղեկավարության նկատմամբ: Նամակում մանրամասն նշված են պատերազմական հանցագործությունները, որոնք իրականացվել են այդ օրերին Ադրբեջանի ղեկավարության կողմից:
- Միաժամանակ, պաշտոնական նամակներ եմ հղել Իսրայելի Կնեսսեթի նախագահ Էդելշայնին, վարչապետ Նաթանյահուին, ՌԴ նախագահ Պուտինին, վարչապետ Մեդվեդևին և ՌԴ քաղաքական ու զինվորական ոլորտների այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց՝ մատնացույց անելով Իսրայելի և Ռուսաստանի կողմից վաճառված հարձակողական զենքերով Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիվ պատերազմն ու կատարված պատերազմական հանցագործությունները և կոչ արել դադարեցնել զենքի վաճառքն Ադրբեջանին ու վաճառված զենքերի հետագա սպասարկումը:
- Ընտրական նոր օրենսգրքի ընդունման ժամանակ իմ կողմից ներկայացվել են բազմաթիվ առաջարկներ, որոնք կարող էին ընտրատեղամասում բացառել խախտումները: Դրանց մի մասն ընդունվել են կառավարության կողմից, սակայն ընտրական գործընթացքում պարզ դարձավ, որ այժմ հիմնական խախտումները կատարվում են տեղամասից դուրս: Ընտրական օրենսգրքում ընդգրկվել է նաև իմ կողմից մշակված և առաջարկված՝ կանանց տոկոսային համամասնությունը խորհրդարանում պահպանման վերաբերյալ նախագիծը: Իմ կողմից առաջարկվող լուծումները տեղական օլիգարխներին խորհրդարան մուտք գործելու հնարավորություն չտալու մասով՝ հատկապես բաց ցուցակների հանումը, չընդունվեցին կա-

ռավարության կողմից:

• Պրոբացիոն ծառայության ներդրման վերաբերյալ օրենքի ընդունման ժամանակ պաշտպանել եմ այդ գաղափարը և կողմ քվեարկել օրենքի ընդունմանը, նախագծի մասին ներկայացրել երկու տասնյակ առաջարկություն:

• Մասնավոր մուլտիպլեքսի հարցը խորհրդարանում քննարկելիս ելույթ եմ ունեցել մարզային հեռուստաընկերությունների փակման, մասնավոր մուլտիպլեքսի ստեղծման արհեստական խոչընդոտների, չափազանց բարձր տուրքի սահմանման դեմ: Պայքարի արդյունքում մարզային անալոգային հեռուստաընկերությունները մինչ այժմ շարունակում են մնալ եթերում, իսկ նրանց պահպանման հարցն օրակարգում է:

• Կառավարության հետ հարցուպատասխանի ժամին բարձրացրել եմ հակակոռուպցիոն խորհրդի կողմից կոռուպցիայի դեմ պայքարի որևէ իրական քայլ չձեռնարկելու և ԱՄՆ ՄԶԳ (USAID)-ից ստացած գումարները ոչ նպատակային ծախսելու հարցը:

• Խորհրդարանում հայտարարությունների ժամին կոչով դիմել եմ հակակոռուպցիոն հանձնաժողովին՝ առաջարկելով հետևյալ գործողությունները՝ որպես կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի գործուն միջոցներ.

- ՀՀ գազամատակարարման համակարգի ուսումնասիրությունների առաջարկները կյանքի կոչել՝ հասնելով նրան, որ ոլորտում եղած չարաշահումները բացառվեն, ինչն իր դրական արդյունքը կունենա բնակչության համար գազի գնի շոշափելի նվազման և տնտեսության զարգացման համար:

- Վերացնել բոլոր գերատեսչությունների արտաբյուջեները և դրանք մտցնել պետական բյուջեի մեջ, այսինքն՝ խորհրդարանական ավելի ուժեղ, ավելի հստակ հսկողության դաշտ:

- Հանել արագաչափերը, տեսանկարահանող սարքերով տուգանքների ինստիտուտն ամբողջությամբ վերանայել ու բացառել դրանց միջոցով մասնավոր սուբյեկտների շահույթ ստանալը :

- Արտադատական կարգով գումարների բռնագանձումներն ընդհանրապես վերացնել և վերականգնել դատական ընթացակարգերը:

- Վերացնել ապօրինի մենաշնորհները շաքարավազի, ալյուրի, զոդման էլեկտրոդների, բանանի, դեղերի, տախտակի, շոկոլադի և այլ ոլորտներում, որոնց մասին ամենալավատեղյակ կառույցը, կարծում եմ՝ ՀՀ գործադիր իշխանությունն է, և ամենալավն իրենք գիտեն, թե որտեղ կան մենաշնորհներ:

- Անկախ աուդիտ կատարել Հարավ-կովկասյան երկաթուղում, որտեղ չարաշահումների մասին հիմնավորումները բազմաթիվ են: Վերանայել կոնցեսիոն պայմանագիրը և պետական բյուջեից հարյուրավոր միլիոնների հասնող սուբսիդավորումը:

- Պետական ռեսուրսների համաչափ բաշխում՝ ինչպես տարածքային սկզբունքով մարզերի և մայրաքաղաքի միջև, այնպես էլ արդարացի բաշխում իշխանության երեք թևերի միջև:

- Պետական ապարատի կրճատում, օպտիմալացում: Կառավարությանն առընթեր պետական մարմինների, նախարարությունների, գերատեսչությունների, նրանց աշխատակազմերի և նաև ղեկավար պաշտոնների տեղակալների հաստիքներով:

- Կառավարության և նախարարությունների շքեղ վերանորոգումների և բազմիցս քննադատված անիմաստ ծախսերի կրճատում:

- Ծառայողական և անվտանգության ուղեկցող մեքենաների և անձնակազմերի կրճատում:

- ՊԵԿ-ի Դիլիջանի ուսումնական կենտրոնի ճոխ ծախսերի կրճատում, և որպես պետական կենտրոն պահելու նպատակահարմարության քննարկում: Այն կարելի է դնել վաճառքի և գումարներն ուղղել պետական բյուջե:

- Պաշտոնատար անձանց կենսագրությունները համեմատել նրանց հայտարարագրերի հետ, և առանց օրինական հիմնավորման ավել հայտարարագրված միջոցների առկայության դեպքում առնվազն ազատել նրանց զբաղեցրած պաշտոններից:

• Այցելելով Լոռու մարզի Շամուտ, Ահնիձոր և Լորուտ գյուղերը՝ տեղեկացել եմ, որ ծրագրվում է Շամուտի և Ահնիձորի դպրոցները միացնել Լորուտի դպրոցին: Իմ կողմից շատ արագ գրություն է ուղղվել կրթության և գիտության նախարարին, ով մի քանի շաբաթ անց հայտնել է, որ այդ հարցը չի քննարկվում:

• Հանրապետության նոր գլխավոր դատախազ ընտրելիս բարձրացրել եմ ՊՊԾ գնդի գրավման 13-րդ օրը ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված լրագրողների և ցուցարարների և այլ քաղաքացիների հանդեպ անհամաչափ ուժի կիրառման, տեխնիկայի դիտավորյալ փչացման և այլ խախտումների և դրանց համար որևէ մեկի պատասխանատվության չենթարկվելու հարցերը:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

• ՌԴ հետ կնքված ՀՕՊ միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու համաձայնագիրը վավերացնելու հարցը քննարկելիս ելույթ եմ ունեցել ՌԴ կողմից Ադրբեջանին հարձակողական զենքի մեծ չափաբաժիններով վաճառքի մասին և կարծիք հայտնել, որ նման պայմաններում այդ պայմանագրի քննարկումն արդեն իսկ սխալ է:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

• Համայնքների խոշորացման ծրագիրը քննարկելիս առաջարկել եմ համայնքները միացնելուց առաջ պարտադիր լսել ժողովրդի կարծիքը, ինչպես նաև փոքր համայնքների համար ապահովել պարտադիր քվոտա՝ համայնքի ավագանում ձայն ունենալու համար: Կառավարության ներկայացուցիչը խոստացել է օրենսդրական լուծում գտնել այդ հարցին:

• Քաղաքացիների դիմումի հիման վրա՝ առաջարկել եմ Կողբ և Բերդավան համայնքները չմիացնել իրար, քանի որ այդ համայնքները չեն ցանկանում իրար միավորվել: Առաջարկությունն ընդունվել է, օրենքում կատարվել է համապատասխան փոփոխություն:

• Թե՛ նախկին, թե՛ նոր կառավարություններին իմ կողմից առաջարկվել է գործադիր իշխանության օպտիմալացման շրջանակներում կրճատել մարզպետների տեղակալների թիվը կամ առհասարակ այդ պաշտոնը՝ իրենց աշխատակազմերով և ուռճացված ծախսերով, քանի որ այդ ինստիտուտը որևէ հստակ գործառույթ և առաքելություն չունի:

ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ

• Կառավարությանն առաջարկել եմ Վանաձոր քաղաքում գործող թերբեռնված դպրոցներից մեկի բավականաչափ մեծ մասնաշենքերից մեկը կամ նպատակահարմարության դեպքում այլ շինություն տրամադրել որպես «Էվրիկա» դպրոցի տարածք, քանի որ դպրոցը տալիս է որակյալ կրթություն, սակայն գործում է շատ վատ շենքային պայմաններում: Առաջարկին ի պատասխան կրթության և գիտության նախարարը պատասխանել է, որ առ այժմ տարածք չկա, սակայն առաջին իսկ հնարավորության դեպքում խնդիրը լուծում կստանա:

• Գրությամբ դիմել եմ նորանշանակ պաշտպանության նախարարին՝ խնդրելով լուծել ԴՈՒՑ-ի զինվորական ավանում բնակվող զինթոշակառուների շենքերի տանիքների նորոգման հարցը:

«ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացրել եմ հետևյալ առաջարկությունները.

1) 1-ին խմբի հաշմանդամների կենսաթոշակների բարձրացում (22.400-ից մինչև առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքին համարժեք՝ 54.000 ՀՀ դրամ)

2) մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատակիցներին ապահովել սոց. փաթեթով

3) Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 դպրոցի հիմնանորոգում

4) Վանաձոր քաղաքի թիվ 1 մշակույթի տան նորոգման ֆինանսավորում

5) Վանաձոր քաղաքի 84 և Գուգարք համայնքի միակ բազմաբնակարան 3-րդ կարգի վթարային շենքերից 10 ամենավատթար վիճակում գտնվողների ամրացում

6) Վանաձոր քաղաքի թիվ 1 պոլիկլինիկային խիստ անհրաժեշտ վերանորոգման և արդիականացման ֆինանսավորում

7) Վանաձոր քաղաքի բազմաբնակարան շենքերի թվով 59 վերելակների նորոգում

8) Հետևյալ տնակային մանկապարտեզների կապիտալ նորոգում.

- թիվ 3 ՆՈՒՀ, Շիրակի խճուղի 64, երեխաների թիվը՝ 63
- թիվ 4 ՆՈՒՀ, Սայաթ-Նովա 18, երեխաների թիվը՝ 50
- թիվ 8 ՆՈՒՀ, Գորկու 9ա, երեխաների թիվը՝ 150

9) Վանաձոր քաղաքի հետևյալ տնակային ավանների և հանրակացարանների բնակիչների բնակարանային ապահովման ֆինանսավորում.

- Քիմմանրաթելերի գործարան, Թևոսյան 1Ա,
- Սանկտ-Պետերբուգի փողոցի տնակային ավան,
- Տնակային հանրակացարան՝ Բժշկական քոլեջի հարևանությամբ,
- Ջերմաէլեկտրակայանի տարածքի տնակային ավան:

10) Վանաձորի կերպարվեստի թանգարանի վերանորոգման ֆինանսավորում:

Նշված առաջարկներից որևէ մեկը կառավարության կողից չի ընդունվել՝ բյուջեի միջոցների անբավարարության պատճառաբանությամբ, ինչի պատճառով դեմ եմ քվեարկել ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի նախագծին:

2016թ. ընթացքում իմ կողմից (ներկայացվել են մեկ տասնյակից ավելի օրենսդրական նախաձեռնություններ, որոնցից հատկապես կարևորում եմ հետևյալները՝

- «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը, որի միտքը վերցվեց և ընդլայնվեց կառավարության կողմից, այնուհետև հրատապ կարգով քննարկվեց և ընդունվեց Ազգային ժողովի կողմից,
- Մի շարք պետական մարմինների ղեկավար կազմում կուսակցական պատկանելություն ունեցող անձանց մասնակցության արգելում (նախագծերի փաթեթը դրական եզրակացությամբ ԱԺ օրակարգում է),
- ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը, որով ընտրակեղծիքներ կատարող անձանց պատիժն առաջարկում եմ սահմանել բացառապես ազատազրկման, այլ ոչ թե տուգանքի տեսքով,
- ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով լուծվում է խորհրդարանում կանանց մասնակցության ավելի մեծ տոկոսի երաշխավորման հարցը և որի միտքը վերցվեց կառավարության կողմից ու ընդգրկվեց նոր ընտրական օրենսդրության մեջ,
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով առաջարկել եմ կիսով չափ նվազեցնել առավել հաճախ հանդիպող և նվազ վտանգավորություն ունեցող ճանապարհատրանսպորտային խախտումների տուգանքները: Որոշ ժամանակ անց նույն խնդրի կարգավորմանն անդրադարձող ավելի լայն նախագիծ առաջարկվեց կառավարության կողմից և ես իմ նախագիծը հանեցի շրջանառությունից ու կողմ քվեարկեցի կառավարության նախագծին,
- Հունվարին շրջանառության մեջ կդրվի ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը, որով առաջարկում եմ ուժը կորցրած ճանաչել ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվող քաղաքացիների կողմից երկրորդ և ավելի անգամ անշարժ գույք կամ մեքենա ձեռբերելու դիմաց գանձվող ԱԱՀ-ն:

www.parliamentmonitoring.am կայքի վիճակագրական տվյալների համաձայն ճանաչվել եմ տարվա ամենաակտիվ պատգամավոր՝ մեծամասնական ընտրական համակարգով ընտրվածներից:

2016թ. ընթացքում, ինչպես և նախորդ 4.5 տարիներին, թե՛ իմ ընտրատարածքից, թե՛ Հանրապետության այլ բնակավայրերից (Երևան, Նոյեմբերյան, Սիսիան, Մեծ Այրում, Գյումրի, Շահումյան, Թեղուտ, Բերդավան, Արմաշ և այլն) ստացված բոլոր դիմումներին, անկախ այն հանգամանքից, թե դրանք ունեցել են անձնական, տեղական, թե հանրապետական նշանակություն, տրվել է համապատասխան ընթացք, դրանցից որևէ մեկն անպատասխան կամ անհետևանք չի մնացել:

Ընթացիկ տարում ուղարկել եմ 400-ից ավել գրություններ, որոնցով քաղաքացիների համար լուծվել են պետական մարմինների գործունեության հետ կապված տարբեր խնդիրներ, ստացել եմ մոտ 250 գրավոր դիմում: Վանաձորի պատգամավորական գրասենյակում, Ազգային ժողովում և այլ վայրերում կազմակերպված հանդիպումների, քննարկումների, լսումների ընթացքում ընդունել եմ 600-ից ավելի քաղաքացիների:

Իմ ամենօրյա պատգամավորական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությունը, տեսանյութերը և հարցազրույցները պարբերաբար տեղադրվում են իմ պաշտոնական կայքէջում՝ www.edmonmarukyan.com ինչպես նաև տարածվում հայտնի սոցիալական ցանցերով:

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը, **«Քաղաքացիական պայմանագիր»** և **«Հանրապետություն»** կուսակցությունները կնքել են համատեղ գործունեության մասին հուշագիր, որի շրջանակներում որոշում է կայացվել առաջիկա խորհրդարանական ընտրություններին համատեղելով այս երեք կուսակցությունների ջանքերը, մասնակցել մեկ միասնական դաշինքով:

Կուսակցության նպատակների ու ամենօրյա գործունեության մասին մանրամասն տեղեկատվությունը հասանելի է www.brightarmenia.am կայքում: